

- 28 Անդ եւ ի բերձ վանս Արղընւոյ,
 Ոչ կասէի յընթեռնըլոյ
 Ուր եւ դրպիր եղէ յետոյ,
 Ծառայելով եկեղեցւոյ:
- 29 Ապայ ըզպէտս հոգւոյն վճարեալ,
 Փոխիւր յաստեաց հայր իմ սիրեալ,
 Որ ուղղափառն էր թագուցեալ,
 Ջի ի նեղաց կայր պակուցեալ:
- 30 Որ զաւուրս իւր միշտ համբուրեաց,
 Ըզդառնու թիւն կուռ փորձանաց,
 Եւ մեծ սովու միջագիտաց,
 Զ՛վերջին բաժակ լեղւոյն փորձեաց:
- 31 Յետոյ քեռիս յամին հաղար,
 Եօթըն հարիւր որ միանայր,
 Ընդ վաթճաներորդ երրորդ համար,
 Գրաւիւր մահու չապրեալ յամայր:
- 32 Եւ զի վաղջան սոյն իմ քեռւոյ,
 Դիպիւր ի վանս իսկ Արղընւոյ,
 Ուստի թաղիւր մերձ հօր իւրոյ,
 Անդ առ դրբան եկեղեցւոյ:
- 33 Այն զի քեռիս գըթով սըրտին,
 Դաստիարակ գ՛տաւ իմ անձին,
 Վասն այն զանուն հօրըս յարկին,
 Թողեալ՝ առ ի զ՛քեռւոյս նուրտին:
- 34 Ի նոյն վայրի հեզն Յովակիմ
 Որ էր նճւիրակ ի գաւառն իմ,
 Սուրբ Յակոբայ որ ի Սաղեմ,
 Գութ ցուցանէր ի վերայ իմ: